«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. **Թեմա՝ Երաժշտական խմբային աշխատանքները որպես երեխայի համագործակցային և հաղորդակցման կարողությունների զարգացման միջոց**

Դաստիարակ՝ Իսկուհի Հաշիմյան

Մանկապարտեզ՝ «Նոյեմբերյան համայնքի Զորականի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1. Երաժշտական խմբային աշխատանքները որպես երեխայի համագործակցային և հաղորդակցման կարողությունների զարգացման միջոց……..5

Երեխայի հաղորդակցման կարողությունների զարգացում…….……5

Երեխայի համագործակցային կարողությունների զարգացում……...…7

Երաժշտական խմբային աշխատանքներ……....9

Գլուխ 2. Հետազոտության ընթացքը……...…11

Եզրակացություն……...….13

Գրականության ցանկ……...….14

Ներածություն

Ժամանակակից աշխարհում երաժշտության տեղը և դերը շատ է մեծանում։ Երաժշտությունը որպես գործիք օգտագործում են տարաբնույթ խնդիրների լուծման համար։ Այս աշխատանքում մենք կփորձենք գտնել երաժշտության կապը հաղորդակցման և համագործակցային կարողությունների զարգացման մեջ։

Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն և մյուսներին հասկանալու համար։ Իսկ առօրյա կյանքում երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը՝ շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել, աշխատել և արարել։ Հաղորդակցման կարողությունը ինքնադրսևորվելու և այլոց վրա ազդելու համար անհրաժեշտ բառապաշարի, խոսքային և ոչ խոսքային միջոցների, հմտությունների տիրապետումն է։ Երեխայի կյանքում հաղորդակցման կարողունակության ձևավորումը սկսվում է ընտանիքից ու շարունակվում է տարբեր կրթական օղակներում։ Ժամանակակից մանկավարժությունը խնդիր ունի սովորողներին ընդգրկելու բազմապիսի հարաբերությունների մեջ՝ ձևավորելով համագործակցային, խմբում ուրիշների հետ աշխատելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու և այդ որոշումների համար պատասխանատվություն կրելու կարողություններ։

Երաժշտությունը զարգացնում է այնպիսի ունակություններ ինչպիսիք են՝ մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը։

Աշխատանքի նպատակն է բացահայտել երեխաների համագործակցային և հաղորդակցման կարողությունների զարգացման և երաժշտական խմբային աշխատանքների միջև փոխկապվածությունը։

Հետազոտության վարկածը. Ենթադրվում է, որ երեխաների համագործակցային և հաղորդակցման կարողությունների զարգացումը պայմանավորված են երաժշտական խմբային աշխատանքներով։

Հետազոտության ընտրանք: Հետազոտությունը անց ենք կացրել <<Զորականի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ում տարատարիք խմբում: Խումբ հաճախում են 3-ից 5տարեկան երեխաները, թվով 23 սան: Հետազոտության համար ընտրել ենք՝

- Ա. Լուսինյանի <<Գնացք>> երաժշտախաղը
- <<Թել ու ասեղ>> շարժախաղը

Աշխատանքի կառուցվածք՝ աշխատանքը կազմված է ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1. Երաժշտական խմբային աշխատանքները որպես երեխայի համագործակցային և հաղորդակցման կարողությունների զարգացման միջոց

Երեխայի հաղորդակցման կարողությունների զարգացում

Հաղորդակցման կարողությունը ինքնադրսևորվելու և այլոց վրա ազդելու համար անհրաժեշտ բառապաշարի, խոսքային և ոչ խոսքային միջոցների, հմտությունների տիրապետումն է: Երեխայի կյանքում հաղորդակցման կարողունակության ձևավորումը սկսվում է ընտանիքից ու շարունակվում է տարբեր կրթական օղակներում: Լեզուն ոչ միայն մշակույթի լավագույն ցուցանիշն է, այլև մարդու լավագույն դաստիարակը: Սեփական մտքի հստակ արտահայտությունը, հարուստ լեզուն, խոսքի մեջ բառերի ճշգրիտ ընտրությունը ձևավորում է սովորողի մտածողությունը: Սովորողը իր ողջ կյանքի ընթացքում պետք է կատարելագործի իր խոսքը, և տարիքային յուրաքանչյուր փուլ յուրովի պետք է հարստացնի այն: Սակայն խոսքի մշակույթի ձևավորման համար ամենաարդյունավետ փուլը մանուկ հասակն է: Սովորողի խոսքը համարվում է նրա զարգացվածության և կրթվածության ինքնատիպ հայելի: Ըստ խոսքի կարելի է անմիջապես որոշել խոսողի մտածողության մակարդակը: Զարգացնելով երեխայի խոսքը՝ մենք զարգացնում ենք նաև նրա ինտելեկտը: Միայն խոսքի զարգացման միջոցով է հնարավոր մտածողության, երեւակայության կայացում և կատարելագործում: Խոսքը օգնում է երեխային ոչ միայն շփվել, այլև ճանաչել աշխարհը: Երեխայի համար գրագետ խոսքը հաջող ուսուցման և զարգացման գրավականն է: Խոսքի ազատ տիրապետումը նպաստում է լիարժեք շփմանը, հասարակության մեջ մարդու հաղորդակցման հարմարավետության ստեղծմանը: Հաղորդակցական կարողունակության ձևավորման գործընթացը երկարատև է և բավականին բարդ:[2]

Հոգեբաններ Լ.Ս.Վիոգսկին, Ա.Լեոնտևը և ուրիշներ ապացուցել են, որ երեխայի հոգեկան բոլոր գործընթացները (հիշողություն,ուշադրություն, մտածողություն, ըմբռնում) ձևավորվում են խոսքի միջոցով: Խոսքը հոգեկան բարդ գործընթաց է, որի զարգացումըկախված է մի շարք պայմաններից: Կարևորվում է շրջապատի միջավայրի ներգործությունը: Երեխան սովորում է խոսել, ընդօրինակել մեծահասակներին որոնք

պետք է նպաստեն երեխայի ճիշտ, հստակ խոսքի ձևավորմանը: Բանն այն է, որ երեխան վաղ տարիքից լսելով մաքուր, գեղեցիկ, ճիշտ խոսք՝ արդյունքում ձևավորում է սեփական խոսքը: Երեխայի անձի ձևավորման և զարգացման մեջ խիստ կարևոր նշանակություն ունեն խոսքի և հաղորդակցության զարգացումը: Հայտնի է, որ երեխայի մտածողությունն արմատական փոփոխությունների է ենթարկվում, երբ նա ունակ է դառնում լեզվական հաղորդակցության և ուսուցումը նրան սովորեցնում է տիրապետել սեփական մտքերին (Լ.Ս.Վիգոտսկի): Երեխայի խոսքի զարգացումը, լեզվական հաղորդակցումն ու փոխազդեցությունն իր անմիջական միջավայրի, շրջապատի հետ, հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ գործունեությունը նրա զարգացման ամենակարևոր գրավականներն են: Հասարակության մեջ իր տեղը գտնելու համար մարդը պետք է արդյունավետ հաղորդակցվել սովորի: Երեխան նախ շփվում է ծնողների հետ, այնուհետև նաև այլ մարդկանց, սովորում է հաղորդակցվել համատեղ գործունեության ընթացքում: Այդ գործունեությունը կարող է լինել խաղ, ուսում, իր ուժերի չափով աշխատանք: Այդ ընթացքում երեխան յուրացնում է իր միջավայրի սոցիալական փորձը, հասկանում է, թե ինչը ինչպես է արվում, սովորում է վարքի ու գործունեութայն նորմերն ու կանոններն, այսինքն՝ հասկանում է, թե ինչ կարելի է անել, իսկ ինչ՝ ոչ, ում հետ ինչպես կարելի է վարվել, որտեղ իրեն ինչպես պիտի պահի և այլն: Իր շրջապատի սոցիալական նորմերի յուրացման այս գործընթացն էլ հենց սոցիալականացումն է: [8]

Երեխայի վաղ սոցիալականացման ամենակարևոր կողմերից մեկը նրա հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումն է: Հենվելով մի շարք հոգեբանամանկավարժական հետազոտությունների վրա՝ կարող ենք նշել, որ խոսքային հաղորդակցման լիարժեք ուղղորդումը նպաստում է երեխաների և միջավայրի փոխհարաբերությունների ձևավորմանը, նրանց անձնային տարբեր որակների զարգացմանը:

Այսպիսով՝ կարող ենք ասել որ հաղորդակցման առաջնային և կարևոր բաղադրիչը խոսքն է (բայց ոչ միակը): Երեխայի խոսքի զարգացումը, լեզվական հաղորդակցումն ու փոխազդեցությունն իր անմիջական միջավայրի, շրջապատի հետ, հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ գործունեությունը նրա զարգացման ամենակարևոր գրավականներն են:

Երեխայի համագործակցային կարողությունների զարգացում

Ժամանակակից մանկավարժությունը, բացի առարկայական կրթություն ապահովելու խնդրից, ունի նաև մեկ այլ կարևոր խնդիր՝ սովորողներին ընդգրկելու բազմապիսի հարաբերությունների մեջ՝ ձևավորելով համագործակցային, խմբում ուրիշների հետ աշխատելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու և այդ որոշումների համար պատասխանատվություն կրելու կարողություններ: [6; c 107]:

Համագործակցային ուսուցման տարածման և զարգացման գործում մեծ ներդրում ունի 1979 թվականին հիմնադրված համագործակցային ուսուցման միջազգային ասոցիացիան (IASCE): 1990-ական թվականներից արդեն համագործակցային ուսուցումը հանրաճանաչ դարձավ ուսուցիչների շրջանում: Ուսուցման համագոր-ծակցային մեթոդը լայն հնարավորություններ է տալիս շեշտադրումը տեղափոխելու սովորելու գործընթացի վրա: Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկությունները ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի կազմակերպման առավել բարձր աստիճան է, որը ենթադրում է որոշակի նոր մշակույթի ձևավորում: Համագործակցային ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել որոշակի տարրեր, որոնց անվանում են համագործակցային ուսուցման տարրեր: Լավ և վատ կառուցված դասերը տարբերվում են հենց այդ տարրերի առկայությամբ կամ բացակայությամբ: Ավելին, հենց այդ տարրերն են, որ պետք է ապահովեն համագործակցային ուսուցումը դասի բոլոր փուլերում: Համագործակցային ուսուցման տարրերն ըստ Ջոնսոնների հիմնականում հինգն են.

1. դրական փոխկախվածություն,

2. դեմ առ դեմ փոխազդեցություն,
3. անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
4. միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի (համագործակցային և սոցիալական) հմտություններ,
5. խմբային գործընթաց /մշակում:

Հետագայում այդ տարրերին ավելացվեց ևս մեկը: Պասի Սալբերգը, *փոխներգործուն / ինտերակտիվ առաջադրանքը* դիտարկում է, որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Այս տարրը ապահովում է համապատասխան պայմաններ, մյուս տարրերի կիրառման ու զարգացման համար [7]:

Համագործակցային ուսուցման հիմնական նպատակը խմբի յուրաքանչյուր անդամին ավելի ուժեղ և ինքնուրույն դարձնելն է: Աշակերտները սովորում են միասին, որպեսզի հետագայում հանդես գան որպես ուժեղ անհատներ: Խմբային առաջադրանքներ կատարելիս աշակերտներն անցնում են այնպիսի իրավիճակներով, որոնք պահանջում են բարդ փոխհարաբերություններ և սոցիալական հմտություններ: Հաճախ այդ հմտություններին չտիրապետելու պատճառով խմբային աշխատանքը ձախողվում է: Համագործակցային ուսուցման հաջողության համար պահանջվում է փոքր խմբերում աշխատելու սոցիալական / համագործակցային հմտությունների զարգացում: [5, c 98]:

Այսպիսով՝ համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի լավագույն տարբերակներից է, նպաստում է նյութի արագ յուրացմանը, խմբի յուրաքանչյուր անդամ ճանաչում է իր ուժեղ և թույլ կողմերը: Զարգանում են սոցիալական, համագործակցային հմտությունները որը և հիմքն է հաջողության:

Երաժշտական խմբային աշխատանքներ

Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն և մյուսներին հասկանալու համար: Իսկ առօրյա կյանքում երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը՝ շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել, աշխատել և արարել:

Ըստ ռուս երաժշտագետ Բ. Ասաֆևի՝ «Երաժշտությունը իրականության կերպարահնչյունային արտացոլումն է», նրանում հնչում է կենդանի խոսք՝ հուզված կամ հանգիստ զրույց, դիմում, կոչ, հարց ու պատասխան:Ահա թե ինչպես է արտահայտվել երաժշտության ազդեցության մասին մեծ Կոմիտասը. «Մեկ հասկացված, անկեղծ ձայն հազար ճառ կարժե, որովհետև ճառը պետք է մարսե հասարակությունը, որ կարենա անկե սնունդ առնել, ինչ-որ ժամանակներու գործ է: Իսկ ձայնը վայրկյանին մեջ կթափանցե մարդու կուրծքեն ներս և այնտեղ կհիմսե զգացման և մտքի վառարան»: [4]

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ- անհատի ձևավորման և զարգացման վրա տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական որակներով: Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ուղղված է այն կարողունակությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը: [3]

Երաժշտության ունկնդրումը և ընկալումը բարդ գործընթաց է, որովհետև այն կախված է յուրաքանչյուր անհատի ներքին զգացողությունից, որը բացահայտելը, ձևավորելը և զարգացնելը բավականին դժվար է: Անհատական և խմբային երգեցողությունը երեխաների ամենասիրելի գործունեության տեսակն է, որի ընթացքում զարգանում է նրա լսողությունը, ռիթմի զգացողությունը: Երգեցողությունից է երեխան ստանում իր առաջին երաժշտական տպավորություններն ու զգայական ընկալումը: Սկսած

նախադպրոցական տարիքից պետք է սովորեցնել երեխաներին ճիշտ երգեցողության կանոնները՝ ձայնի դրվածք, շնչառություն, բառերի հստակ արտասանություն, մաքուր ինտոնացիա և այլն: Խմբային երգեցողության միջոցով ձևավորվում և զարգանում է սովորողների երգչային ձայնածավալը, ճիշտ շնչառությունը, ձայնակազմությունը, առոգանությունը, մաքուր ինտոնացիայով միաձայն (ունիսոն) և երկձայն երգելու կարողությունը, անսամբլային զգացողությունը, որը հիմքեր է նախապատրաստում հետագայում խմբերգային երգեցողության համար: Խմբային երգեցողությունը զարգացնում է նաև մի շարք բարոյական արժեքներ՝ բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, միասնականություն, մեկը մյուսին լսելու, սեփական պարտականությունների նկատմամբ պատասխանատու վերաբերմունք դրսևորելու կարողությունը: Երաժշտական գործունեության մյուս ձևը երաժշտառիթմական և պարային շարժումն է, որը նպաստո տում է սովորողների հոգևոր և ֆիզիկական ուժերի ներդաշնակ զարգացմանը, ժամանակի և տարածության մեջ ճիշտ կողմնորոշվելու ունակությանը: Երեխաների սիրած գործունեության տեսակներից է խաղը, մասնավորապես՝ երաժշտական շարժախաղերը, որոնք կարևոր դեր են կատարում նախադպրոցականների շարժումային գործունեության զարգացման գործում: Շարժախաղերը լայն հնարավորություն են տալիս երեխաներին ցուցադրելու ինքնուրույնություն և ստեղծագործական երևակայություն:[1; էջ 178]

Այսպիսով՝ երաժշտական խմբային աշխատանքները նպաստում են երեխաների երևակայության, ստեղծագործ մտքի, խոսքի, վարքի որոշակի կանոնների ձևավոմանը: Նպաստում է այլ երեխաների հետ հաղորդակցման և համագործակցման ձևավորմանը:

Գլուխ 2. Հետազոտության ընթացք

Հետազոտությունը անց ենք կացրել <<Զորականի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ում տարատարիք խմբում: Խումբ հաճախում են 3-ից 5տարեկան երեխաները, թվով 23 սան: Հետազոտության համար ընտրել ենք մեկ խմբերգ և մեկ շարժախաղ:

Պլան

Ոնկնդրել և ուսուցանել <<Գնացք>>երգը, խաղալ <<Թել ու ասեղ>> շարժախաղը: Նպատակը զարգացնել հաղորդակցման և համագործակցային կարողությունները:

Ա. Լուսինյանի <<Գնացք>> երաժշտախաղի օգնությամբ զարգացրեցինք երեխաների մոտ հաղորդակցման և համագործակցային կարողությունները, ակտիվությունը, շարժունությունը, առաջացրեցինք հուզական արձագանք, խթանեցինք հեքիաթային հերոսների շարժումները հորինելու կարողություն:Պարապմունքը անց ենք կացրել խմբասեյակում:

Նվագարկիչով երգը լսելուց հետո երեխաներին առջադրվեց հետևյալ հարցերը՝

- Դուք հավանեցիք երգը:
- Երգը ինչի՞ մասին է:
- Իսկ ինչպես է շարժվում գնացքը:
- Եկեք միասին երգենք:
- Հիմա եկեք երգենք, գնացքի պես շարժվելով խմբասենյակում:

Այսպիսով՝ երաժշտական խմբային աշխատանքները նպաստում են երեխաների հաղորդակցման և համագործակցային կարողությունների զարգացմանը, քանի որ երաժշտախաղի ընթացքում երեխաները ոչ միայն շփվում՝ հաղորդակցվում են այլև պայմանավորվում են գործողությունների հաջորդականությունը, իրենց դերերի բաշխման գործընթացը, ձեռք են բերում փոխպայմանավորվածություններ:

<<Թել ու ասեղ>> շարժախաղի միջոցով զարգացնում ենք երեխաների հաղորդակցման և համագործակցային կարողությունները, ըմբռնողականությունը և ուշադրությունը, դիտողականությունն ու հիշողությունը, ամրապնդվում ու ընդլայնվում են ձեռք բերած

գիտելիքները: Դաստիարակը սկզբում պարզ ու հակիրճ ձևով պետք է բացատրի կամ հիշեցնի խաղի կանոնները:

Բոլոր խաղացողները իրար ձեռքից բռնած կազմում են շրջան: Խաղացողներից 2-ը ներկայանում են որպես« թել» և «ասեղ»: Նրանք կանգնում են շրջանից դուրս՝ իրար ետևից: Դաստիարակի հրահանգով «ասեղը» վազում է , իսկ «թելը»՝ նրա ետևից: Որ ճանապարհով անցնում է «ասեղը», նույն կերպ պետք է անցնի «թելը»՝ նպատակ ունենալով բռնել «ասեղին»: «Ասեղը» անցնում է մեկ շրջանի ներսով՝ երեխաների արանքներով, մեկ՝ դրսով: Եթե «թելը» սխալվում է , նրան փոխարինում է մեկ այլ խաղացող: Երբ «թելը» բռնում է «ասեղին», «ասեղը» իր տեղն է զբաղեցնում շրջանում : Այժմ էլ «թելն» է հանդես գալիս որպես «ասեղ», իսկ մեկ այլ խաղացող՝ որպես «թել»: Խաղը շարունակվում է այնքան ժամանակ , մինչև բոլոր երեխաները ընդգրկված լինեն ակտիվ խաղում: Շարժախաղը ուղեկցվում է ակտիվ, ռիթմիկ երաժշտությամբ:

Խաղի ավարտից հետո երեխաներին առջադրվեց հետևյալ հարցերը՝

- Ձեզ դուր եկավ խաղը:
- Կցանկանաք նորից խաղալ:

Այսպիսով՝ երաժշտական խմբային աշխատանքները նպաստում են երեխաների հաղորդակցման և համագործակցային կարողությունների զարգացմանը, քանի որ շարժախաղի ընթացքում երեխաները ցուցաբերեցին հնարամտություն, ակտիվություն, ազնվորեն կատարեցին խաղի կանոնները:

Տնօրենի եզրակացությունը թեմայի շուրջ

Խմբասենյակում ստեղծվել է համապատասխան միջավայր երեխաների հաղորդակցման և համագործակցային կարողությունների զարգացման համար: Խումբ տարատարիք է, թեման համապատասխանում է 3-5 տարեկանների ծրագրային նյութին: Պարապմունքի ընթացքում երեխաները իրենց զգում էին ուրախ, ակտիվ, ոգևորված մասնակցում էին երաժշտական խաղերին մեծ ոգևորությամբ:

Պարապմունքը միտված էր՝ հաղորդակցման և համագործակցային կարողությունների զարգացմանը:

Կարծում եմ դաստիարակի կողմից հետազոտվող թեման շատ կարևոր և մեծ նշանակություն ունի նախադպրոցական կրթության մեջ, քանի որ այն ուղղված էր գտնելու երաժշտական խմբային պարապմունքների կապը հաղորդակցման և համագործակցային կարողությունների զարգացման միջև: Յուրաքանչյուր երեխա շատ տարբեր է, և իրենց հաղորդակցման և համագործակցային ունակությունները նույնքան տարբեր են: Եվ այդ կարողությունների զարգացմանը միտված յուրաքանչյուր քայլ կարևոր ներդրում է երեխայի կյանքում: Պարապմունքը համարում եմ հաջողված և օրինակելի:

Տարատարիք խումբ մեթոդիստ Լ. Հովհաննեսյանի կարծիքով դաստիարակը հասավ իր նպատակին: Դաստիարակը բազմաթիվ մեթոդների միջոցով հասավ վերջնական նպատակին: Երեխաները ազատ և անկաշկանդ մասնակցում էին պարապմունքին: Դաստիարակի կողմից հետազոտվող թեման շատ կարևոր և արդիական է:

Եզրակացություն

Այսպիսով՝ աշխատանքի վերլուծությունից եզրահանգում ենք, որ երեխաների համագործակցային և հաղորդակցման կարողությունների զարգացումը պայմանավորված է երաժշտական խմբային աշխատանքներով: Քանի որ երաժշտախաղի ընթացքում երեխաները ոչ միայն շփվում՝ հաղորդակցվում են այլև պայմանավորվում են գործողությունների հաջորդականությունը, իրենց դերերի բաշխման գործընթացը, ձեռք են բերում փոխպայմանավորվածություններ, շարժախաղի ընթացքում երեխաները ցուցաբերեցին հնարամտություն, ակտիվություն, ազնվորեն կատարեցին խաղի կանոնները: Երեխաները տրամադրված էին դրական, ինչպես խաղի այնպես է միմյանց նկատմամբ, պատասխանատվություն էին կրում իրենց պարտավորությունը կատարելու, զարգացավ նաև սոցիալական հմտությունները: Եվ սա ապացուցում է, որ համագործակցային և հաղորդակցման կարողությունները փոխկապակցված են և երաժշտական խմբային աշխատանքները նպաստում են վեր նշվածի զարգացմանը:

Գրականության ցանկ

1. Գևորգ Տիգրանյան, Հայ երաժշտական թատրոնի 100 տարին: Հայաստան, 1968թ. 215 էջ
2. Գ. Թորոսյան, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան <<Խոսք և հաղորդակցություն>>
3. «Երաժշտություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր: Հաստատված է 2012թ.:
4. Կոմիտաս, Երկերի ժողովածու, երրորդ համար: Հայաստան, 1969:
5. Зарукина Е.В. Активные методы обучения: рекомендации по разработке и применению / Е.В. Зарукина, Н.А. Логинова.- СПб: СПбГИЭУ, 2010 116с
6. Кашлев С.С. Интерактивные методы обучения / С.С. Кашлев.- М.: Мозаика-Синтез, 2015 114с
7. Pasi Salberg. “Principles of Co-operative Learning”, University of Helsinki. https://jasce.jp/iasce/www.iasce.net/home/resources/manchester-2002-conference-workshopabstracts.html 20
8. https://znanio.ru/media/------2614961